ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԻՐ ՏԵՂԸ ՉԻ ԴՐՎԱԾ

Ամեն մի նշանակալից երկ, արվեստի որ ասպարեզին էլ այն պատկանելիս լինի, իր հայտնվելով լայն արձագանք է առաջացնում ժամանակակիցների շրջանում, ըստ արժանավույն գնահատվում, որպես արվեստի գործ, զբաղեցնում իր տեղը այլ արժեքների շարքում:

Տեսաբաններն առհասարակ ժլատ չեն գտնվել իրենց խոսքն ասելու գրական, թատերական, երգ-երաժշտական, կերպարվեստի և այլ նորընծա երկերի վերաբերյալ, բայց, ահա ամեն տարի մեր քաղաքներն ու բնակավայրերը հարստանում են նորակառույցներով, որոնց մեջ քիչ չեն արվեստի առումով արժեք ներկայացնող, միաժամանակ մեր շրջապատը կազմակերպող, միջավայրին նոր դեմք ընծայող երկերը, որ մնում են մասնագիտորեն չբացահայտված, չարժեքավորված:

Ահավասիկ Երևանի «Ռոսիա» մեծ տարողության կինոթատրոնի շենքը[1], որը ոչ միայն զգալի փոփոխություն մտցրեց մայրաքաղաքի բնակիչների կենցաղում, իր լայն դռները բացելով նրանց առաջ, այլ և քաղաքի մի կարևոր հատվածը վերափոխելով, ստեղծել է հասարակական նշանակության նոր միջավայր, իր հետ բերելով ճարտարապետական ուրույն արտահայտություն, մարդկանց մոտ հրահրելով գեղագիտական որոշակի վերաբերմունք:

«Ռոսիա» կինոթատրոնին ընդարձակ հոդվածով անդրադարձավ ճանաչված տեսաբան, ճարտարապետության դոկտոր Յու. Յարալովը (տես՝ «Коммунист», 23. 7. 1975 թ.), սակայն դրանով չպետք է ասվելիքը սպառված համարել, քանզի հարցն ընդարձակ է և ընդգրկում է նաև այլ առումներ: Բանն այն է, որ հիշյալ հոդվածի հարգելի հեղինակը նշած թերություններում թվարկելով քաղաքաշինական առաջնային հարցեր, առանց ընդմիջելու վերապահում է անում, թե. «... այդ բոլորը չի կարող իջեցնել «Ռոսիա» կինոթատրոնի համալիրի բարձր գնահատականը»:

---

[1] Նախագծի հեղինակներ՝ Ա. Թարխանյան, Ս. Խաչիկյան, Հ. Պողոսյան, գլխ. կոնստրուկտոր՝ Գ. Գևորգյան (Ծ. Կ.):

Ճարտարապետական երկը նայվում է իր շրջապատում, որպես նրա մասը, և որքան այն լավ է կապվում իր շրջապատին, օրգանապես մերվում գոյություն ունեցող ներդաշնակությանը, լրացնում այն, դառնում նրա համապատասխան մասը, այնքան բարձր է գնահատվում: Բուն երկի բարեմասնությունները արժեքավորվում են վերոհիշյալից ելնելով ու նրանից հետո:

Հոդվածագիր ընկ. Յու. Յարալովը արել է ճիշտ հակառակը՝ բարձր արժեքներ վերագրել կառույցին, հետո միայն արծարծել հանգույցի քաղաքաշինական կողմը, ակներև մեղանչել սովետական և, ընդհանրապես քաղաքաշինության սկզբունքային հարցում:

Արդ ինչ իրավիճակ գոյություն ունի մեր մայրաքաղաքի այդ հատվածում: «Ռոսիա» կինոթատրոնը դրված է Երևանի բուն կենտրոնում՝ տրանսպորտային մեծ նշանակություն ունեցող 26 կոմիսարների[2], ապա Խանջյանի անվան շրջանային և բավական բանուկ Մարքսի[3] անվան փողոցների և մայրաքաղաքի հարավային մուտքը՝ երկաթուղային կայարանը Լենինի անվան հրապարակին[4] կապող Հոկտեմբերյան պողոտայի[5] խաչմերուկում, իրոք, ոչ մեծ եռանկյունի պարագծով հողամասի վրա:

Երևանի կենտրոնում, մի շարք փողոցներով, տրանսպորտային և մարդկային շարժվող հոսանքներով խճճված այդ հանգույցում չէր կարելի տեղադրել մեծ տարողության հասարակական կառուցվածք:

Բնակավայրերի հատակագծման նորմատիվներով պարզապես չի թույլատրվում մարդկանց այդպիսի կուտակումը նման տեղերում:

«Ռոսիա» կինոթատրոնի շենքը տվյալ հողամասին չի համապատասխանում, ավելի որոշակի՝ նախագծված է վերացական, անկախ կոնկրետ հողամասի ընձեռած հնարավորությունների և ռեալ պայմանների: Դրանով պետք է բացատրել նրա անբնական դրվածքը տվյալ հողամասում, ինչպես և այն, որ մեծ դահլիճի ծավալի մի մասը

---

[2] Այժմ՝ Ագաթանգեղոսի փողոց (Ծ. Կ.):
[3] Այժմ՝ Մովսես Խորենացու փողոց (Ծ. Կ.):
[4] Այժմ՝ Հանրապետության հրապարակ (Ծ. Կ.):
[5] Այժմ՝ Տիգրան Մեծի պողոտա (Ծ. Կ.):

դուրս գալով հողամասի սահմաններից, վերևից կախվում է Հոկտեմբերյան փողոցի վրա:

Հոկտեմբերյան փողոցը՝ մայրաքաղաքի հարավային մուտքը՝ երկաթուղային կայարանը միացնում է Լենինի անվան հրապարակին: Նրա և Մարքսի անվան փողոցի հատման տեղից առաջացած առանցքի վրա դրված է 9 հարկանի մի բնակելի շենք, նրա երկու կողմերում առկա շենքերը համեմատաբար ցածր են՝ 4-5 հարկանի:

«Ռոսիա» կինոթատրոնի շենքը, որ դրված է այդ նույն առանցքի վրա, սակայն ոչ իր հիմնական առանցքով, կանգնած է կողքի ճակատով՝ ուղղահայաց վերոհիշյալ փողոցներով առաջացած առանցքին: Եվ քանի որ շինության արտաքին ծավալատարածական հորինվածքը իր երկրորդ առանցքի նկատմամբ անհամաչափ է, այդպես անհամաչափ էլ ուրվագծվում է դիմացի բնակելի շենքի հարթության վրա:

Հարց է առաջանում, ինչու՞ հեղինակները կինոթատրոնի գլխավոր առանցքի վրա գտնվող մուտքերից մեկը չեն ուղղել հարավ՝ ի տես քաղաքի հարավակողմից եկողների, որտեղ նաև փոքրիկ պուրակ է ստեղծված, մուտքերից մյուսը՝ հյուսիս, որտեղ փողոցը ավելի լայն է, մարդկանց մոտեցման կազմակերպումն ավելի դյուրին:

Ըստ երևույթին, նախագծողներին հետաքրքրել է ավելի մեծ հեռավորությունների վրա ի տես ներկայացնել շինության կողքի յուրօրինակ ճակատները և ոչ մուտքերը, որոնց գլխավերևում դահլիճների ծածկերի միապաղաղ հարթություններն են՝ անհետաքրքիր դիտելու համար: Այստեղ ակնհայտ է հարմարության զոհաբերումը սուբյեկտիվ գեղագիտական ըմնռնումներին: Անկոծկելի հակասությունը արդյունք է կինոթատրոնի նախագծի և տեղանքի աններդաշանակության, ավելի ճիշտ՝ խորթության:

Արդ, որո՞նք են «Ռոսիա» կինոթատրոնի բուն շենքի բարեմասնություններն ու թերությունները:

Անառարկելի է, որ մայրաքաղաքի բնակիչներին հիանալի նվեր է ավելի քան երկուսուկես հազար տեղով երեք հարմարավետ դահլիճներով կինոթատրոնը: Ներսում ամեն ինչ հանդիսավոր է՝ մուտքերը, սանդուղքները, բազկաթոռները, ճեմասրահները:

Երևանի գրեթե բոլոր նշանակալի շինությունները կառուցվել են վերջին 50-55 տարիների ընթացքում: Մեր ժողովուրդը երբեք անտարբեր չի եղել իր ձեռքերով կառուցվող, ինչպես բնակելի, այնպես էլ բազմազան նշանակության շինությունների ընդհանուր պատկերի գեղագիտական կողմի նկատմամբ: Նա ամեն բանում ուզում է տեսնել գեղեցիկը առանց պաճուճանքի, հաճելին բնականորեն ստեղծված՝ անձեռակերտ: Նա դրանք համարում է իր իսկ էության արտահայտությունը, դրանցով իրավամբ հպարտանում է, ներկայացնում օտարերկրացիներին, հյուրերին, զբոսաշրջիկներին և, որ կարևորն է՝ գալիք սերունդներին:

Եվ ահա, Երևանցին՝ հավատարիմ իր գեղագիտական ճաշակին, սիրով է ընդունել այնպիսի կառուցումներ, ինչպիսիք են Կառավարական տունը, երբեմնի «Ժողտուն» անվանվող Օպերայի և բալետի թատրոնի շենքը, Լենինի արձանը նույնանուն հրապարակում, Հաղթանակի մոնումենտը Քանաքեռի բարձունքում, Եղեռնի և վերածննդի հուշարձանը Ծիծեռնակաբերդում և այլ շինություններ և կոթողներ:

Բայց ահա նրա սիրտը չհաշտվեց, նա չընդունեց երբեմնի «Կառուցողների ակումբ» կոչվող այժմյան Ստանիսլավսկու թատրոնի շենքը: Ճիշտ նույն ձևով ընդունելություն չի գտնում նորակառույց կինոթատրոնի շենքը (ինչպես և մի քանի այլ կառուցումներ Երևանի կենտրոնում):

Այն պատկերը, որ ստեղծվել է այդ շինության կառուցումով չի ընկալվում, չի մարսվում, շարունակում է մնալ որպես օտար մարմին առողջ օրգանիզմում:

Ինչո՞վ բացատրել այս երևույթը: Ըստ երևույթին շատ գործոններով, նախ և առաջ տեղով. այսինքն՝ այս կինոթատրոնի ծավալատարածական հորինվածքը, նրա յուրօրինակ պատկերը ներքաղաքային բնույթի չէ, օտար է այն հասկացությանը, որ ստեծվել է ժամանակի ընթացքում քաղաքներում կառուցված շինությունների ներդաշնակության ընկալումով:

Կասկածի ենթակա չէ, որ տվյալ շինության նկատմամբ նման վերաբերմունք չէր ստեղծվի, եթե այն տեղադրվեր քաղաքային սովորական կառուցապատումից և շարժուն փողոցներից հեռու, մի կանաչապատ ընդարձակ տարածության մեջ: Ահա այս

դեպքում տվյալ շինությունը և լավ կկարդացվեր, կդիտվեր ու կդիտարկվեր և մասշտաբով էլ կհամապատասխաներ իր շրջապատին ու չէր հակադրվի քաղաքային փողոցներին ու կառուցապատմանը:

Հակառակ դրան այն այժմ կանգնած է քաղաքային կառուցապատման անմիջական շրջապատում, նույնիսկ կախված է փողոցի՝ ավելի ճիշտ մայրաքաղաքի կարևորագույն մայրուղիներից մեկի վրա: Եվ ոչ միայն այդ: Նրա ամենից շատ դիտվող կողային ճակատների շատ մեծ չափեր ունեցող չդիֆերենցված հարթությունները բնակարանային շենքերի պատշգամբներով ու պատուհաններով մանրացված ֆոնի վրա պատկերվում են իրենց անմասշտաբայնությամբ ու անհամատեղելիությամբ. դրանք միմյանց նկատմամբ անհաշտ են, հակասական, աղաղակող, իրարամերժ:

Եթե այս կինոթատրոնի շենքը, թեկուզ այդ նույն տեղում, ունենար կրկնակի փոքր ծավալ, թերևս, այդպես խորթ չլիներ շրջապատին, անկախ իր անսովոր ծավալատարածական, մեջտեղից տրոհված հորինվածքին: Հարավսլավիայի քաղաքներից մեկում ճիշտ նման պատկերով մի շինություն կա, այն տարբերությամբ միայն, որ նա ծավալով շատ ավելի փոքր է. նա «Ռոսիա» կինոթատրոնի նման համակառույցի ներդաշնակությունը գլխավորելու հավակնություններ չունի և իր տեղում շփոթ չի ստեղծում: Այս օրինակը ցույց է տալիս, որ մեր նորակառույց կինոթատրոնի շենքը փոքր շինության մեծացրած մակետն է: Դա է նրա անբանականությունը և զարմանալի խորթությունը իր շրջապատում:

Այն նախագծում, որով կառուցվել է կինոթատրոնը, քիչ չեն նաև տեխնիկական բնույթի վրիպումները: Ընդունված կարգ է, որ մեծ տարողության սրահների մուտքերն ու ելքերը լինեն միմյանց նկատմամբ հակառակ կողմերում, որ մարդկային շարժվող հոսանքը հետադարձ ուղղություն չունենա և այլն: Ահա այս սկզբունքների հիման վրա են կազմված Սովետական Միությունում լայնորեն կիրառվող կինոթատրոնների բոլոր տիպային նախագծերը:

Ներկա վիճակով թվում է թե մեր նորակառույց թատրոնը փոքր շինության մեծացրած մակետն է: Քաղաքային համակառույցում չափային համամասնության, մասշ-

տաբայնության հարցը առաջնային է, որի անտեսումը միշտ էլ բերում է անհաջողության: Այդպես է նաև այստեղ:

Նոր կինոթատրոնի շենքը որոշակի կողմնորոշում չունի: Ներքաղաքային կառուցապատման համար յուրահատուկ է, որ շինություններից յուրաքանչյուրն ունենա ճակատ՝ գլխավոր, կողային և կամ հավասարարժեք, եթե դիտվում է բոլոր կողմերից, ինչպիսիք են օրինակ բոլորակ, բազմանիստ, աստղակերպ և նման այլ շինությունները:

Վատ է, իհարկե, որ «Ռոսիա» կինոթատրոնի շենքը դիտվում է բոլոր կողմերից, բայց հենց այդ էլ մոտեցողին զցում է կատարյալ տարակուսանքի մեջ. այնուամենայնիվ ո՞րն է գլխավոր ճակատը, գլխավոր մուտքը, որ քայլի այդ կողմը, ներս անցնի՝ մոտենա դրամարկղին:

Երբ հարավակողմից կամ հյուսիսակողմից եք նայում շինությանը, երևում են գետնից բարձրացված երկու մեծաչափ, շեղորեն միմյանց մոտեցած «խուլ» հարթություններ, ծանրացած ապակեպատ ներքնամասի վրա: Եվ հյուսիսից և հարավից առաջին պլանի վրա բաց բազմաստիճան սանդուղքներ կան: Հնարավոր է մտածել, որ դրանցով էլ մտնում են դիտասրահ: Իրոք, երբեմն այդտեղով էլ հանդիսականներին ներս են տանում: Երբ արևելակողմից եք նայում, կամ արևմտակողմից, տեսնում եք վերևից իջնող և ներքևից բարձրացող աղեղվող երկու գորշ հարթություններ, որ հանդիպելով միմյանց, ստեղծում են օդում կախված պատի մի նեղ շերտ, իսկ ներքևում, որտեղ վերջանում է բետոնաշեն կեսոնակերպ ծածկը մուտքն է, որ իր ձևերով չի տարբերվում շինության ներքնամասի ողջ պարագծով անցնող միահարկ և երկհարկ ապակեպատից: Սրանք շինության ճակատներն են, իսկ որտե՞ղ է ի վերջո դրամարկղների սրահը, որ սովորաբար կինոթատրոնների կարևոր մասերից է և լինում է անմիջականորեն մուտքերի հարևանությամբ: Եվ ի՞նչ՝ «Ռոսիա» կինոթատրոնի դրամարկղների սրահը մուտքերից հեռացվել, և մի անսպասելի տեղում իջեցվել է ներքնահարկ: Այդտեղից տոմսով հաճախորդը չի ընկնում կինոթատրոն, ներքնահարկից բարձրանում, դուրս է գալիս փողոց:

Այն նախագծում, որով կառուցվել է կինոթատրոնը, առկա են մի շարք տեխնիկական բնույթի շատ լուրջ վրիպումներ, որոնք արգասիք են հասարակական նշանակության շինության ճարտարապետական նախագծման բուն սկզբունքների խախտման:

Ընդունված կարգ է, որ մեծ տարողության սրահները տեղադրվեն շինությունների ստորին հարկերում: Որ այդ սրահների մուտքերն ու ելքերը լինեն միմյանց նկատմամբ հակառակ կողմերում, որպեսզի մարդկային շարժվող հոսանքը հետադարձ ուղղություն չունենա և այլն: Ահա այս սկզբունքների հիման վրա են կազմված Սովետական Միությունում լայնորեն կիրառվող կինոթատրոնների բոլոր տիպային նախագծերը:

Մարդկային մեծ տարողության հիմնարկություններում էվակուացիայի ուղիների նկատմամբ խիստ պահանջները միանգամայն տրամաբանական են և նրանց խախտումները կարող են մեծ վնասներ բերել և զոհերի առիթ դառնալ դժբախտ դեպքերի ժամանակ:

«Ռոսիա» կինոթատրոնի շենքում անխտիր խախտված են մեր կողմից բերված վերոհիշյալ անհրաժեշտությունները: Ահավասիկ՝ 1. երկու մեծ դահլիճները արհեստականորեն գետնից կտրվել, բարձրացվել են այնքան, որ հարավային ելքը գտնվում է սովորական շինության երրորդ հարկի բարձրության վրա (ամֆիթատրոնների վերջին շարքերը հասնում են չորրորդ, թերևս հինգերորդ հարկի բարձրության): 2. Երկու մեծ դահլիճների երկուական մուտքերը գտնվում են նույն սանդուղքների նույն հարթակներում: Պետք էր սպասել, որ այդ դահլիճների ելքերը գտնվեին հակառակ ծայրերում, մինչդեռ շինության հեղինակների կողմից նախընտրած ընդհանուր հորինվածքը իրենց իսկ զրկել է այդ սրահների ելքերի խնդրի լավագույն լուծումից և, ինչպես տեսնում ենք, երկուական ելքերը գտնվում են դահլիճների նույն անկյուններում, ուր երկուական մուտքերն են:

Ստացվում է, որ եթե մուտքերի և ելքերի նույն անկյուններում դեպքի դժբախտ բերումով փլուզում կամ հրդեհ տեղի ունենա, երկու դահլիճների հազարավոր բազ-

մությունը կմնա բոլոր կողմերից փակված դահլիճներում, մեծ բարձրության վրա, ենթակա բախտի քմահաճույքին:

Ենթադրենք ելքերի մոտ փլուզում տեղի չի ունեցել, բայց տագնապի ազդանշանով անհրաժեշտ է դարձել անմիջապես ազատել դահլիճները: Ստացվում է, որ երկու մեծ դահլիճներում գտնվող ավելի քան 2600 մարդ, ավելացրած ևս մոտ 1500 կամ 2000 մարդ, որ սպասում են հաջորդ սեանսին, պիտի խռնվեն նույն մուտք ու ելքերի մոտ: Այս պայմաններում նույնպես դժբախտ դեպքեր են պատահում, երբեմն ավելի, քան պատկերացնում ենք:

Տեխնիկական բնույթի վրիպումներից պետք է համարել նաև շինության կոնստրուկտիվ կողմի լուծումների որոշ մասը: Այստեղ խոսվում է, ոչ թե որևէ կոնստրուկցիայի սխալ հաշվումը, կամ նման որևէ բան, այլ ճարտարապետական նախագծով նախատեսված կոնստրուկցիաների աննպատակահարմարությունը: Այսպես. երկու մեծ դահլիճներից յուրաքանչյուրը բարձրացվել և դրվել է չորսական հենարանների վրա: Այդ զգալիորեն աննպաստ պայմանների մեջ է դնում նախ և առաջ հիմնատակերը: Եվ, ապա ստացվել են մեծ ծանրաբեռնվածությամբ մեծ թռիչքներով հեծաններ և սալեր: Այսպիսի դեպքերում զգալի մեծանում է գործադրվող պողպատի և բարձր կարգի ցեմենտի պահանջը, որոնց խնայողության համար շարունակաբար միջոցառումներ են առաջադրվում:

Որ շինության, հատկապես դրա ստորին մասի, կոնստրուկտիվ լուծումը աննպատակ և արհեստականորեն բարդեցված է, տողերիս գրողի մոտ ամենևին կասկած չեն հարուցում:

Կինոթատրոնի ներքին ձևավորման արժեքավորման հարցում տիրապետող կարծիքները միանման չեն: Հանդիսասրահներն աներկբա արժանի են դրվատանքի, բարձր գնահատականի, մի բան, որ չի կարելի ասել մնացյալի մասին: Օրինակ, երկու դահլիճների միջև ստեղծված նեղ և բարձր տարածությունը, որտեղ սանդուղքներն են տեղավորված, անմիջականորեն հիշեցնում է գոթական եկեղեցիների ներքին բարձր տարածությունը: Երկու դեպքում էլ դրանք մարդուն ոչ թե վեհություն են ներշնչում, այլ

առաջացնում են ճնշվածության զգացմունք չդիֆերենցված մեծ չափերի կոնստրուկցիաների խտության մեջ: Տվյալ դեպքում դրությունը պակաս մխիթարական է, քանի որ եկեղեցիներում վարպետորեն մշակված ճարտարապետական ձևերի, սլացիկ սյուների, ջլակամարների նուրբ ու կատարյալ հյուսվածքի և այլ բարեմասնությունների համեմատությամբ այստեղ ամեն ինչ պարզունակ է ու մերկ, որ թողնում է անավարտվածության տպավորություն, առաջացնում անբավարարվածության զգացմունք:

Ճեմասրահների ներսում երկու ուղղանկյուն ծավալների երկու կողային հարթությունները պատված են մետաղե դրվագված քանդակներով, նրանցից յուրաքանչյուրում հարթության ողջ մակերեսով մեկ ցրված են մարդու օրգանիզմի մասերի պատկերներ՝ ձեռքեր, գլուխ, աչքեր և այլն: Դիտողը պետք է կռահի, թե քանդակագործը այդ ձևով պատկերում է ժամանակակից աշխատավոր մարդուն: Այդ քանդակադրոշմներից ավելի շուտ կարելի է կռահել, թե ինչ դժբախտ վիճակի է հասնում մարդ արարածը որևէ պայթյունի զոհ դառնալով:

Սա ռեալիզմ չէ և ոչ էլ ռոմանտիզմ, սա ոչ թե նոր արվեստի նմուշ է, այլ ռեալիստական արվեստը դեպի անկումայնություն ձգող արտահայտություն:

Որպես XX դարի արվեստի գործեր են հրամցվում քարաքանդակ այն այլանդակությունները, որոնք տեղադրված են կինոթատրոնի շուրջը՝ միջավայրը շինության ոճին կապելու, միասնական, ամբողջական տպավորություն ստեղծելու ակնկալությամբ: Դրանց հեղինակները հավանաբար իրենց գործերը համարում են նոր ժամանակների նվաճումներ, որ ցավոք ժամանակակիցներիս կողմից ընկալման, ըմբռնողության չեն արժանանում:

Բանն այն է, որ այդ կարգի «ժամանակակից» համարվող «արվեստը» իր «հայրենիքում» անգամ արդեն մերժվել, դարձել է անցյալ պատմություն: Մեզ մոտ երևացողները նրա ուշ արձագանքի արտահայտություններն են և ոչ մի կերպ չեն կարող ընդունելի համարվել:

Մի երկու խոսք ճեմասրահում և սանդուղքների գլխավերևում կախված ջահերի վերաբերյալ: Ինքնին հասկանալի է, որ ջահն ստեղծվում է որպես լուսավորության աղ-

բյուր, նրա արդուզարդը պիտի նպատակադրված լինի լույսի սփռումը հետաքրքիր դարձնելու համար և ոչ թե հակառակը: Իսկ ի՞նչ են իրենցից ներկայացնում «Ռոսիա» կինոթատրոնի ջահերը՝ ծանր ու մռայլ մետաղակուռ տուփեր, որոնցից առկայծում է խեղդված, բռնադատված լույսը, իսկ իրականում տարածությունը լուսավորում են սովորական լուսաղբյուրները: Զարմանալին այն է, որ այդ ջահերը ոմանց կողմից գնահատվում են որպես ժամանակակից արվեստի հաջողված գործեր:

Անիի XI դարասկզբի հուշարձան Գագկաշենի պեղումների ժամանակ փլատակների տակից հանված ջահը իրեն նրբագեղ ձևերով, իր նշանակությանը համապատասխանելու առումով շատ ավելի ժամանակակից է, քան մեր մայրաքաղաքի նորակառույց կինոթատրոնի ջահերն են:

Մեր հանրապետության ճարտարապետների անցած տասնամյակների ակտիվ գործունեությամբ Երևանի ճարտարապետությունը ստացել էր որոշակիորեն արտահայտված միասնական դեմք: Վերջին ժամանակներում տվյալ միասնականությունը ինչ որ չափով սասանվեց, որոշ տեղերում, նույնիսկ ճեղքվածներ առաջացան: Եվ ահա այժմ դիտարկվող կինոթատրոնը դրանք ավելի ընդարձակեց: Այստեղ չգտնվեց չափավորության այն կշռադատված մոտեցումը, որն անհրաժեշտ էր գոյություն ունեցող միջավայրում նոր ձևերի մուծման և եղած արժեքների խելամիտ զուգորդման համար, ի շահ ավելի թարմ հնչող ճարտարապետական ներդաշնակության:

Ամփոփենք: Երևանի «Ռոսիա» կինոթատրոնի նախագծի ստեղծման ընթացքում խախտվել են հասարակական նշանակության շինությունների ճարտարապետական նախագծման գրեթե բոլոր սկզբունքերը: Քաղաքաշինության առումով այն սխալ է տեղադրված քաղաքի տարածքում և կամ կոնկրետ շինությունը տեղի համար չի նախագծված ու տեղին չի համապատասխանում, ինչպես և տվյալ տեղում սխալ կողմնորոշում է ստացել:

Խախտվել են կոնկրետ շինության՝ մեծ տարողության կինոթատրոնի նկատմամբ ներկայացվող պահանջները՝ դիտասրահները անտեղի գետնից կտրվել, բարձրացվել են, դրամարկղները իրենց տեղից հանվել, իջեցվել են ներքնահարկ: Լրջորեն

խաթարվել է շարժման գրաֆիկը, ցավոք, ոչ միայն այս հանգույցում, այլև բուն դիտասրահներում: Մարդկային մեծ զանգվածի ուղիները ոչ միայն զրկվել են հստակ լինելուց, այլև սխալ տեղադրում են ստացել, հոի անսպասելի հետևանքներով:

Պարզ է դառնում, որ «Ռոսիա» կինոթատրոնի նախագծողները չկարողանալով լինել արդի ճարտարապետության սկզբունքների բարձրության վրա, կառչել են նրա արտաքին կեղծ, մտացածին նշաններին, մեխանիկորեն պատճենել ճարտարապետորեն չտրամաբանված արտահայտչամիջոցները, այդպիսիք գործադրել ոչ ըստ տեղի և էության:

Նոր կինոթատրոնի շինությունը արդ հնարավոր չէ դիտել որպես արվեստի ասպարեզում մեր նվաճումների հետագա, օրգանական առաջընթաց, ավելի որոշակի՝ այն սովետահայ ճարտարապետության զարգացման ուղին չէ:

«Ռոսիա» կինոթատրոնը ավարտված շինություն է և նրանում ոչինչ հնարավոր չէ փոխել կամ բարելավել: Մեր խոսքն ուղղված է տվյալ օրինակի փորձով կառուցման մեջ գտնվող, նաև նոր նախագծվող նշանակալից շինություններում անուղղելի վրիպումներից խուսափելու համար:

2/11/1975 թ.